**Արձանագրություն N 7**

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի(այսուհետ ՎԶՄԲ) միջև 2015 թ-ի ապրիլի 08-ին ստորագրված «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագրի» 8495-ԱՄ և 2016 թ-ի մայիսի 12-ի ստորագրված «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» 8615-AM համաձայնագրերի , ՎԶՄԲ «Վարկերի ընդհանուր պայմաններ»-ի բաժիններ 5.08-ի և 5.09-ի դրույթների (այսուհետ Ընդհանուր պայմաններ) պահանջներին ԵրՋԷԿ-ի համապատասխանության ապահովման ծառայությունների ձեռք բերման նպատակով կազմակերպված՝

"ԵրՋԷԿ-ՆՈ 01/17 ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
/գնային առաջարկների բացման, գնահատման և արդյունքների ամփոփման նիստի/

ք. Երևան 3 օգոստոսի 2017թ ժ.15:00

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Բաղդասարյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Դադունցը |
| | Ա. Զաքարյանը |
| | Լ. Օհանյանը |
| Հանձաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |
| «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ ներկայացուցիչ՝ | Գ. Ախոյանը |

**Օրակարգ**

1. «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ որակավորման չափանիշների եւ տեխնիկական առաջարկների գնահատման և արդյունքների հրապարակման մասին.
2. «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկի բացման մասին.
3. Գնային առաջարկի գնահատման մասին.
4. Գնահատման արդյունքների ամփոփման.
5. Պայմանագիր կնքելու որոշման մասին.

Հարց 1

Հանձնաժողովի քարտուղար Ա. Պետրոսյանը հրապարակեց «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ որակավորման չափանիշների և տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները՝ համաձայն գնահատման արձանագրության.
«Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ հայտը՝ որակավորման չափանիշները եւ տեխնիկական առաջարկը գնահատվել է բավարար, հետևյալ միավորներով՝

| Գնահատման չափանիշ | Գանահտված միավորը |
|---|---|
| Մասնագիտական փորձառություն | Առկա է |
| Տեխնիկական միջոցներ | |
| Ֆինանսական միջոցներ | |
| Աշխատանքային ռեսուրսներ | 25 |
| Տեխնիկական առաջարկ | 75 |
| Ընդամենը | 100 |

Հարց 2
Հանձնաժողովի քարտուղար Ա. Պետրոսյանը բացեց Հրավերի պահանջներին համապատասխանող գնահատված՝ «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկը պարունակող ծրարը, և հայտարարեց գնային առաջարկը՝ ընդհանուր գումարով՝ հիմք ընդունելով տառերով գրվածը՝

«Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից ներկայացված գնային առաջարկը կազմում է՝
99 900 000 (իննսունինը միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ.
83 250 000 (ութսուներեք միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, առանց՝ ԱԱՀ.

Հարց 3 Քննարկվեց, Առաջարկվեց՝
Հաշվի առնելով, որ՝ համաձայն "ԵՐՋԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հրավերի 8.18 կետի՝ որակավորված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի ֆինանսական առաջարկը գնահատվում է հարյուր միավոր, իսկ մյուս մասնակիցների ֆինանսական առաջարկներին տրվող միավորները հաշվարկվում են բանաձևով, և այն, որ "ԵՐՋԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցում է մեկ մասնակից, ուստի՝ «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից ներկայացված ֆինանսական առաջարկը համարել նվազագույն գնային առաջարկ և գնահատել 100 միավոր:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 4 Դեմ՝ 0

Հարց 4 Քննարկվեց, Առաջարկվեց՝

Հաշվի առնելով, որ "ԵՐԶԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցում է մեկ մասնակից, հետևապես և այն, որ հրավերով սահմանված կարգով գնահատված՝ «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ ՄԳ - ն (մասնակցին տրվող գնահատական) կկազմի 100 միավոր, ուստի՝ ընտրված մասնակից ճանաչել «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 4 Դեմ՝ 0

<u>Հարց 5</u> Քննարկվեց, Առաջարկվեց՝

Հաշվի առնելով, որ "ԵՐԶԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի միակ մասնակից «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից ներկայացված՝

1) հայտը՝ որակավորման չափանիշները եւ տեխնիկական առաջարկը գնահատվել է բավարար՝ 100 միավոր, ֆինանսական առաջարկը համարվել է նվազագույն գնային առաջարկ և գնահատվել՝ 100 միավոր, հետևաբար՝ ՄԳ-ն (մասնակցին տրվող գնահատական) կազմել է 100 միավոր, և «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ն համարվել է ընտրված մասնակից,

2) գնային առաջարկը չի գերազանցում "ԵՐԶԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի գնման առարկայի հրապարակված նախահաշվային գինը,

ուստի՝ Ընդունել որոշում «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ հետ պայմանագիր կնքելու մասին, հաշվի առնելով, որ համաձայն "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 4 Դեմ՝ 0

**<u>Գնահատող հանձնաժողովը</u>** **<u>որոշեց՝</u>**

1. «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից ներկայացված ֆինանսական առաջարկը համարել նվազագույն գնային առաջարկ և գնահատել 100 միավոր:
2. «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ ՄԳ-ն (մասնակցին տրվող գնահատական) գնահատել 100 միավոր:
3. "ԵՐԶԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով երկու փուլով մրցույթի գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ին:
4. "ԵՐԶԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով երկու փուլով մրցույթի գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքել «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ հետ:
5. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝

ա/ սույն արձանագրության հաստատումից անմիջապես հետո՝ դրա բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում, միաժամանակ՝ էլեկտրոնային եղանակով ուղարկել նաև «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին, իսկ փաստաթղթային տարբերակի մեկ օրինակը հանձնել Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ ներկայացուցիչ Գ. Ախոյանին.

բ/ ոչ ուշ, քան սույն արձանագրության հաստատմանը (ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը) հաջորդող առաջին աշխատանքային օրը տեղեկագրում հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

գ/ Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ տեղեկագրում հրապարակել «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի իրական շահառուների մասին տվյալները (Հայտի Հավելված 2.1)՝ բնօրինակից արտատպված (ականավորված) տարբերակով:

դ/ Սույն արձանագրության հրապարակումից հետո՝ ոչ ուշ, քան չորս աշխատանքային օրվա ընթացքում ապահովել «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ին ծանուցումը՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Բաղդասարյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Դադունց |
| | Ա. Զաքարյան |
| | Լ. Օհանյան |
| Հանձաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյան |